

Տարգա Սուպեր



Ընտրողական հետձևային հերբիցիդ է հացազգի մոլախոտերի համար:

Ազդող նյութը՝ կվիզալոֆոպ - Պ - էթիլ (52 գ/լ)

Պատրաստուկային ձևը՝ խտացված էմուլսիա

Փաթեթավորումը՝ 100 մլ, 1 և 20 և տարաներ

Արտադրող ֆիրման (երկիր)՝ Նիսան Քեմիկալ Ինդաստրի

Հատկությունները և առավելությունները

- նվազագույն ֆիտոտոքսիկ ազդեցություն մշակաբույսի վրա
- արագ կլանվում է մոլախոտերի տերևների մակերևույթով
- սրսկումից մի ժամ հետո տեղացած անձրևը չի ազդում պատրաստուկի էֆեկտիվության վրա
- մոլախոտերի վրա վնասվածքների առաջին նշանները նկատվում են սրսկումից երկու օր հետո
- ի շնորհիվ երկարատև ազդեցության, կարող է օգտագործվել մոլախոտերի զարգացման տարբեր փուլերում
- բացառում է բազմամյա մոլախոտերի կրկնակի ծլարձակումը
- անվտանգ է մարդկանց ու կենդանիների առողջության համար:

Տարգա Սուպերը ներբուսային ազդեցության հերբիցիդ է, կուտակվում է մոլախոտերի, ինչպես վերգետնյա, այնպես էլ ստորգետնյա հյուսվածքներում և խանգարում է ճարպաթթուների սինթեզը, որի արդյունքում բույսը մահանում է: Տարգա Սուպերը ոչնչացնում է մոլախոտերի և տերևները, և արմատները, որի շնորհիվ բացառվում է նրանց կրկնակի աճը: Պատրաստուկը արագ լուծվում է հողում (7 օրվա ընթացքում), որի շնորհիվ էլ վտանգավոր չէ ցանքաշրջանառության հաջորդ կուլտուրաների համար:

Ազդեցության շրջանակները և ծախսի նորման

Մշակաբույսը	Մոլախոտերի տեսակը	Ծախսի նորման և/հա	Մշակման ժամկետը
Սեղանի և շաքարի ճակնդեղ, գազար, կաղամբ, սոյա	Միամյա հացազգի	1.0-2.0	Սրսկել վեգետացիայի ընթացքում մոլախոտերի 3-6 տերև փուլում
	Բազմամյա հացազգի	2.0-3.0	Սրսկել վեգետացիայի ընթացքում մոլախոտերի 10-15 սմ երկարության ժամանակ
Կարտոֆիլ	Միամյա և բազմամյա հացազգի	2.0-4.0	Սրսկել միամյա մոլախոտերի 2-4 տերև փուլում, իսկ բազմամյա մոլախոտերի 10-15 սմ երկարության ժամանակ
Հլածուկ	Միամյա հացազգի	1.0-1.5	Սրսկել վեգետացիայի ընթացքում մոլախոտերի 3-5 տերև փուլում
	Բազմամյա հացազգի	2.0-3.0	Սրսկել վեգետացիայի ընթացքում մոլախոտերի 3-6 տերև փուլում
Պոմիդոր	Միամյա հացազգի	1.0-2.0	Սրսկել վեգետացիայի ընթացքում մշակաբույսի 1-2 իսկական տերև փուլում կամ սածիլումից 15 օր հետո
Վարունգ	Միամյա հացազգի	1.5	Սրսկել մոլախոտերի 10-15 սմ երկարության ժամանակ